# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ

հրատարակվում է 1994 թ.

գինը՝ 150 դրամ

19/4115/ 3 փետրվարի 2012 ուրբաթ

I SSN 1829-2224

12008

9 771829 222003



Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am


# Լեւոն Արոնյանը կտրականապես հրաժարվում է Ադրբեջան ոտք դնել



Աշխարհի 2-րդ ուժեղագույն շախմատիստ, Հայաստանի ազգային հավաքականի առաջատար, օլիմպիական չեմպիոն եւ աշխարհի թիմային չեմպիոն Լեւոն Արոնյանը երեկ ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովին, նախագահական խորհրդին եւ ԶԼՄ-ներին պաշտոնապես հայտարարել է, որ բացառվում է իր մասնակցությունը աշխարհի չեմպիոնի կոչման համար հավակնորդների մրցաշարին, եթե այն անցկացվի Ադրբեջանում: Տեղեկացնենք, որ հավակնորդների մրցաշարի կազմակերպման հայտ ներկայացրել են Ադրբեջանն ու Բուլղարիան:

Երեկ aravot.am-ը տեղեկացրել էր, թե Ադրբեջանի շախմատի Ֆեդերացիայի փոխնախագահ Մահիր Մամեդովը ադրբեջանական լրատվամիջոցներով անհաջող փորձ էր արել աշխարհին համոզելու, որ Արոնյանի համար բոլոր անհրաժեշտ պայմանները իրենք պատրաստ են ապահովել: Եթե անգամ աշխարհը չէ, մենք հո անձնական փորձով գիտենք, թե ադրբեջանական խոստումները որքան հեռու են իրականությունից:

## Ա
# Նորահայտ «Ֆիլոսներ»

Մոտ 340 տարի առաջ Մոլիերը գրել էր իր «Քաղքենին ազնվական» կատակերգությունը: Զավեշտալի իրավիճակների հիմքն այն էր, որ 17-րդ դարում, շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, ի հայտ եկան բազմաթիվ հարուստ մարդիկ, որոնք ունեցվածքով չէին զիջում, իսկ երբեմն նաեւ գերազանցում էին ազնվականներին, բայց իրենց մտավոր եւ մշակութային որակներով ոչ մի կերպ չէին համապատասխանում բարձր խավի չափանիշներին: Թվում է, թե այդ նորահայտ մեծահարուստները կարող են ապրել նաեւ առանց նման հավակնությունների: Բայց նրանք, ովքեր այդպես են մտածում, լավ չգիտեն մարդկային էությունը: Մարդը սովորաբար չի կարող սահմանափակվել իր ունեցած պալատներով եւ ոսկիներով, նա ցանկանում է ձեռք բերել, փողով գնել նաեւ «պատիվ-հարգանքը», որպեսզի նրան համարեն ոչ միայն հարուստ եւ բարեգործ, այլեւ կրթված, արդարամիտ եւ նույնիսկ իմաստասեր: Կամ, ինչպես կասեր աշխարհի հայերի առաջնորդ Արա Աբրահամյանը՝ «Ֆիլոս»: Թվում է, թե ինչ է եղել՝ նստիր քո Մոսկվայում, վայելիր քո միլիոնները, եթե մտքովդ անցնում է՝ բարեգործություն արա, բայց ոչ՝ այդ գործարարն ուզում է նաեւ «Ֆիլոս» լինել, տիեզերքի խնդիրների մասին գրքեր է գրում: Եթե մեկը հարցնի, թե ինչ է գրված այդ գրքերում, նա դժվար թե որեւէ լեզվով կարողանա դրանց բովանդակությունը վերաշարադրել: Իրեն պարզապես պետք է, որ գրքի վրա գրվի նրա անունը՝ դա շոյում է մեծահարուստի ինքնասիրությունը:

Պատգամավոր դառնալը եւ ընդհանրապես «քաղաքականությամբ» զբաղվելը մեր օլիգարխների համար նույնպես այդ երանգն ունի: Իհարկե, այստեղ կա նաեւ պրագմատիկ բաղադրիչը՝ պատգամավորական մանդատը նպաստում է նրանց բիզնեսի ստվերայնությանը: Բայց կա նաեւ «պատիվ-հարգանքի» պահանջը՝ պատգամավոր լինելը նրանց համար ինչ-որ «էլիտար» բան է, «գյուղ» համարի կամ Հյուսիսային պողոտայի անիմաստ բնակարանի նման:

Մեր պաշտոնյաները, բնականաբար, նույն մեծահարուստներն են՝ պաշտոնը, ինչպես հայտնի է, հարստության աղբյուր է: Եվ որքան նրանց վարկը եւ իմիջը անհամատեղելի են մտավորականի մասին պատկերացումների հետ, այնքան շատ են նրանք ձգտում ներկայանալ որպես մտավորական: Մի քանի տարի առաջ Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանին դարձրել են ինչ-որ ակադեմիայի ակադեմիկոս: Հիմա էլ նա իր պատրաստակամությունն է հայտնում գնել Թբիլիսիում Հովհաննես Թումանյանի տունը՝ հավանաբար, քաղաքապետի աշխատավարձի իր «հետ քցած» փողերով: Եթե Վարդանիկն է այդ տունը գնելու, ապա, կներեք՝ այդ տունն անձամբ ինձ պետք չէ:

Վերջերս էլ հայտնի դարձավ, որ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը որոշել է խորանալ գիտության մեջ: Ըստ երեւույթին, նա չի պատկերացնում հայ պատմագիտության հետագա զարգացումը առանց իր հզոր մտքի եւ բազմակողմանի գիտելիքների: Զուգահեռաբար փորձում է նաեւ փոքր-ինչ «պրիտակեցնել» իր իմիջը:

…Կոտայքի մարզպետ Կովալը, որքան գիտեմ, գիտական ոչ մի աստիճան չունի: Որպես այդ մարզի բնակիչ՝ ես պատրաստ եմ միանգամայն անշահախնդիր ձեւով օգնել նրան, որ նա թեկնածուական թեզ պաշտպանի երաժշտագիտությունից:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Արհեստական աժիոտաժ»

«Առավոտի» հետ զրույցում ՀԺԿ քաղխորհրդի անդամ Գրիգոր Հարությունյանը վստահեցրեց, որ ՀԱԿ-ում «ընտրացուցակի խնդիր», որպես այդպիսին, գոյություն չունի: Այդ առիթով մամուլի հետաքրքրությունը պարոն Հարությունյանը որակեց «արհեստական աժիոտաժ» եւ հայտարարեց, որ օրինակ՝ իր համար բացարձակապես նշանակություն չունի, թե ընտրացուցակի որ հորիզոնականն ինքը կզբաղեցնի:

Կարդացեք էջ 2:

### Դաշինքների մասին խոսելը վաղաժամ է

Ընդդիմադիր դաշտում ինչպիսի՞ այլյանսներ են հնարավոր, արդյոք դրանք այսօր նշմարելի՞ են: Խոսվում է «Ազատ դեմոկրատների» եւ «Ժառանգության», նաեւ ՀՅԴ-ի եւ «Ժառանգության» միջեւ հնարավոր դաշինքի մասին: «Առավոտի» այս հարցին ի պատասխան՝ կուսակցության վարչության անդամ Գառնիկ Գեւորգյանն ասաց. «Դրա մասին մի քիչ վաղ է խոսել, որովհետեւ ընդդիմադիր բոլոր ուժերը, այդ թվում՝ «Ազատ դեմոկրատները», բազմիցս հայտարարել են, որ բոլոր այդ հարցերի շուրջ քննարկումներ են ընթանում: Այնուամենայնիվ, կարծում եմ, «Ազատ դեմոկրատների» եւ «Ժառանգության» դաշինքը ձեր մատնանշածներից ամենահավանականն է զուտ գաղափարական տեսանկյունից, իսկ մյուսների հետ համագործակցությունը հնարավոր եւ ցանկալի է: Երբ խոսք է գնում դաշինքների մասին, մենք սկզբունքային ենք համարում գաղափարական ընդհանրությունները, այլապես դա դառնում է կոնյունկտուրային, իրավիճակային, բացառապես նախընտրական շահ սպասարկելուն միտված դաշինք, որը եւ ես, եւ մեր կուսակցությունն ընդունելի չենք համարում»:

Կարդացեք էջ 3:

### Շտաբի նիստում էլ ցուցակին չեն անդրադարձել

Երեկ տեղի է ունեցել ՀԱԿ-ի շտաբի նիստ, որի ընթացքում ՀԱԿ համամասնական ցուցակի կազմավորման վերաբերյալ քննարկումներ չեն եղել: Aravot.am-ի հետ զրույցում այդ մասին տեղեկացրեց ՀԱԿ-ի շտաբի անդամ Դավիթ Մաթեւոսյանը: Մեր զրուցակիցը նաեւ հավելեց, որ հիմնականում քննարկվել են ամսի 17-ին կայանալիք ՀԱԿ-ի հանրահավաքին վերաբերող կազմակերպչական հարցեր:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 13-ին, «Փաստարկ» մամուլի ակումբի հյուրն է ԱԺ ՀՀԿ խմբակցության քարտուղար Գագիկ Մելիքյանը:

### Եղանակ

Երեւան - 9 + 1, Շիրակ - 21 - 3, Կոտայք - 17 - 3, Գեղարքունիք - 17 - 3, Լոռի - 16 - 2, Տավուշ - 13 0, Արագածոտն լեռներ - 21 - 3, Արագածոտն նախալեռն. - 10 + 1, Արարատ - 10 + 1, Արմավիր - 10 + 1, Վայոց Ձոր լեռներ - 21 - 3, Վայոց Ձոր նախալեռն. - 9 + 2, Սյունիքի հովիտներ - 8 + 2, Սյունիքի նախալեռներ - 11 + 1, Արցախ - 7 + 2

## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

### Թե ինչպես ազգային հերոս չդարձա



Ինչ լավ է, որ վկաներ կան: ԽՍՀՄ Կոմերիտմիության վերջին համագումարն էր: Եվ ես, որպես «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիր, հրավիրված էի համագումարին: Այն տարիներին «Գարուն» ամսագիրը երկու տիրոջ ծառա էր՝ Կոմերիտմիության Կենտկոմի եւ Հայաստանի Գրողների միության:

Մոսկվայում աննրեւ էր գալիս, եւ ես, սովորույթիս համաձայն, ակամա ուշացա հասնել համագումարի դահլիճ: Եվ քանի որ ուշացել էի՝ աղետալի արագությամբ փորձեցի մտնել ներս: Այնինչ նախադահլիճում գեղեցկուհի ռուս աղջիկներ էին նստած, որոնցից մեկը ինձ հարցրեց.

- ԾՈՒվցՑՏփՍց ՑՏՉՈՐՌք, Չo փսπվ տսπվցՎՈ?

Եվ ես, որպեսզի ուշացումս փրկեմ, կատակով ասացի.

- ԾπՑ ՊՏՐՏՉՈ , տսπվ փսπվցՎՈ.

Մի պահ լռություն տիրեց: Հետո բոլորը սկսեցին հռհռալ ու ինձ տարան՝ ցույց տվեցին իմ տեղը, որտեղ ես պիտի նստեի: Մեր ղեկավար Հրանուշ Հակոբյանը զայրացած էր, որ ես ուշ մտա, չնայած նիստը դեռ չէր սկսվել եւ դահլիճում կիսախավար էր: Ներողություն խնդրելով՝ նստեցի եւ անմիջապես էլ նկատեցի, որ առաջին շարքում նստած է Պոլիտբյուրոն՝ Գորբաչովի գլխավորությամբ, իսկ մենք երկրորդ շարքում էինք: Եվ ես՝ ուշացածս, հանկարծ հասկացա, որ իմ դիմաց Գորբաչովն է նստած, եւ մտածեցի, որ եկել է պահը, որ կարող եմ նրա հետ խոսել: Երբ բարձրացա տեղիցս, որ գնամ, Հրանուշ Հակոբյանը համոզեց, որ չգնամ: Բայց ես համառորեն գնացի: Գնացի՝ բոլորին բարեւելով հասա Գորբաչովին: Ասացի՝ ԻՊՐՈՉրՑՉցռՑπ ԾՌւՈՌս հπՐՉπպՉՌփ, Ռջ ԸՐՎπվՌՌ, եւ մեկնեցի ձեռքս՝ բարեւելու: Ու զարմանալի բան՝ Գորբաչովը մի տեսակ ծերացավ նստած տեղում եւ երկար ժամանակ իմ մեկնած ձեռքը չէր վերցնում: Հետո կարծես թե հասկացավ, որ ես անվնաս մարդ եմ ու ոտքի կանգնելով՝ սեղմեց ձեռքս: Եվ ես անմիջապես էլ հասկացա, որ սխալ եմ թույլ տվել, քանզի երկրի նախագահին մոտենալուց առաջ նախագահը պիտի իմանար այդ մասին: Եվ ես իմ սխալից շփոթվելով՝ ձեռքս դրեցի Գորբաչովի ուսին եւ ասացի՝ ԻՈՊՌՑπրՖ ԾՌւՈՌս հπՐՉπպՉՌփ, եւ զարմանալին այն էր, որ նա հնազանդորեն նստեց: Եվ ես իմ գրպանից հանելով «Գարուն» ամսագրի անունով գրիչը՝ ուզեցի նվիրեմ նրան, բայց նա երկար ժամանակ գրիչը չէր վերցնում: Եվ ես հասկացա, որ դարձյալ սխալ եմ թույլ տվել, երեւի նրան թվում էր, թե գրիչը պայթուցիկ է: Ու ես հասկանալով իմ անհեթեթ վիճակը՝ մի քանի անգամ սեղմեցի գրիչը ու մեկնեցի իրեն: Եվ նա վերցրեց: Ասացի՝ Միխայիլ Սերգեեւիչ, ՊՈՐ ՉՈՎ ՖՑg ՐցփՍg, փՑՏno Չo տՏՊտՌրՈսՌ ՌՎ րՈՎՏՏտՐπՊπսπվՌπ ԾՈՉՏՐվՏՉՏ ԽՈՐՈոՈւՈ. Եվ զարմանալիորեն նա հումորով ինձ պատասխանեց, ասելով՝ ՍՈՍ ՐՈջ ՐցփՍՌ վπ ւՉՈՑՈսՏ.

Ու երբ վերադարձա իմ տեղը, իմ ընկերները ասացին՝ ի՞նչ արեցիր դու, չե՞ս հասկանում, որ քեզ կարող էին գնդակահարել, որովհետեւ բոլոր թիկնապահները զենքերը պատրաստ, սպասում էին: Տեր Աստված, ինչ հրաշք էր, որ ծոցիս գրպանից չհանեցի գրիչս, եթե ոչ՝ չիմաստավորված ազգային հերոս էի դառնալու:

Եվ հիմա ես իմ ընտանիքի եւ իմ մտերիմների չկայացած ազգային հերոսն եմ:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

# «Եթե ցուցակում չլինեմ՝ չեմ նեղանա»

## ՀԺԿ քաղխորհրդի անդամ Գրիգոր Հարությունյանն էլ է հրաժարվում ՀԱԿ-ի ընտրացուցակի իր «անցողիկ» տեղից

- Պարոն Հարությունյան, ՀԺԿ-ում հստակեցված մոտեցում կա՞, կուսակցությունը ՀԱԿ-ի ընտրացուցակի կազմավորման ո՞ր սկզբունքին է կողմ: Ճի՞շտ եք համարում, որ ցուցակի առաջին հորիզոնականները զբաղեցնեն կուսակցության, հասարակական-քաղաքական նախաձեռնությունների ղեկավարները, երբ նրանցից ոմանց մարդիկ չեն էլ ճանաչում, ավելին՝ նրանք առանձնապես գործունեություն չեն էլ ծավալել: Մինչդեռ Կոնգրեսում կան կարկառուն անհատականություններ, ովքեր վայելում են հասարակության մի հատվածի համակրանքը:

- Կուսակցությունների, հասարակական-քաղաքական նախաձեռնությունների բոլոր ղեկավարներն էլ ընդգրկվելու են ՀԱԿ-ի համամասնական ցուցակում: Դա քննարկման ենթակա հարց չէ: Այդ մարդիկ իրավունք ունեն ընդգրկվելու: Բայց, բնականաբար, ցուցակը պետք է գլխավորեն այնպիսի մարդիկ, ովքեր հասարակության կողմից ճանաչված են, հասարակության կողմից ընկալելի են եւ այս ժամանակաշրջանում վաստակել են այդ իրավունքը: Ինչ մնում է «անցողիկ» կոչվածին՝ 90 տեղն էլ անցողիկ են: Այդ թեման փակեք, ոչ ոք չի կարող այսօր ասել, թե ժողովուրդը քանի մանդատ կհատկացնի ՀԱԿ-ին, կամ իշխանությունն ինչքան կկեղծի:

Կուսակցությունում մենք դեռ չենք քննարկել ընտրացուցակի ձեւավորման սկզբունքը, բայց, ըստ իս, պետք է ամեն դեպքում ցուցակի առաջնային տեղերում լինեն մարդիկ, ովքեր ճանաչված են, հարգանք են վայելում հասարակության շրջանում եւ վաստակել են այդ իրավունքը:

- Ըստ Ձեզ՝ ովքե՞ր են այդ մարդիկ: Կարո՞ղ եք անուններ հրապարակել:

- Ինչո՞ւ ոչ: Լիքը: Բայց հիմա, որ ես անուններ հրապարակեմ, կստացվի, որ ձեզ ցուցակ եմ թելադրում: Այդ մարդիկ այս ամբողջ ժամանակաշրջանում ձեր աչքի առաջ են եղել, պայքարել են, ներդրում ունեն: Իսկ նման մարդիկ շատ են՝ եւ մեր կուսակցության մեջ, եւ մյուսներում:



- ՀԺԿ-ից ո՞ւմ եք տեսնում ՀԱԿ-ի համամասնական ցուցակում:

- ՀԺԿ-ի ցուցակը մենք չենք քննարկել, բայց մեր քաղխորհուրդն ամբողջությամբ կարող է լինել:

- Ստեփան Մինասյանն օրերս հայտարարել էր, որ ՀԱԿ համամասնական ցուցակի առաջին տեղում Տեր-Պետրոսյանին է տեսնում, երկրորդում՝ Ստեփան Դեմիրճյանին. դա բուռն քննարկումների տեղիք տվեց: Մասնավորաբար, ասում են, որ ՀԱԿ-ի՝ նախորդ օրը կայացած քաղխորհրդի նիստում քննարկման առարկա է դարձել այդ «ինքնագլուխ» հայտարարությունը, որը այդքան էլ դուր չի եկել ՀԱԿ կենտրոնական գրասենյակի անդամներին:

- Նորմալ է: Բա ի՞նչ ասեր, ո՞նց եք պատկերացնում: Նմանատիպ ցուցակ եղել է Երեւանի ավագանու ընտրություններում:

Ես չգիտեմ՝ ով եւ որտեղ ինչ է ասել, բայց նման քննարկում չի եղել:

- Շա՞տ կարեւոր եք համարում այս պատմությունները, թե ով ցուցակի որ հորիզոնականում կլինի: Սա՞ է այսօրվա թիվ մեկ խնդիրը:

- Ոչ, դա նպատակ չէ: Կոնկրետ ինձ համար միեւնույն է՝ ցուցակում կլինեմ, թե ոչ: Լինեմ էլ՝ պայքարելու եմ, չլինեմ էլ՝ պայքարելու եմ: Ինձ համար պատգամավոր լինելն էլ գերխնդիր չէ: Ես մեծ ուրախությամբ ցանկացած մեկին կզիջեմ, եթե ինչ-որ բան լինի:

Խորհրդարանական ընտրություններից առաջ նման աժիոտաժ լինում է, բայց կգա ժամանակը, եւ կտեսնեք, թե ինչպես է ամեն ինչ հարթ անցնում: Սա ես համարում եմ արհեստական աժիոտաժ:

- Այսինքն՝ եթե այնպես ստացվի, որ Դուք ՀԱԿ-ի համամասնական ցուցակում չընդգրկվեք, չե՞ք նեղանա:

- Ոչ, բացարձակապես: Ազնվությամբ եմ ասում՝ ոչ: Իհարկե, ես ցուցակում ընդգրկված կլինեմ, բայց ինձ համար բացարձակապես հարց չէ, թե որ համարը կլինեմ, թեկուզ՝ միջնամասում կամ 127-րդ տեղում:

- Իսկ ո՞ր հարցն է, ըստ Ձեզ, հիմա առաջնային:

- Որ երկրում ազատ ու արդար ընտրություններ լինեն:

Մի առիթով ես այդ օրինակը բերել եմ, հիմա նորից ուզում եմ կրկնել՝ ուսումնասիրեք, խնդրում եմ, Հայաստանում, հատկապես Երեւանում, ինչքան օտար լեզու ուսուցանող, ուսումնասիրող կազմակերպություններ կան եւ ովքեր են սովորողները՝ բժիշկներ, ծրագրավորողներ ու այլ մասնագետներ՝ մարդիկ, ովքեր մեր հասարակությանն այսօր պետք են, բայց նրանք սովորում են, որպեսզի երկրից դուրս գան, փախչեն: Թե չէ՝ պատգամավոր կլինեմ-չեմ լինի... 13 տարի ես պատգամավոր եղել եմ: Ինձ նման մարդու համար պատգամավոր լինելը տանջալից աշխատանք է:

Զրույցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

# Գեներալ Մանվելի որդին Էջմիածնի հետ կապված 30-40 տարվա ծրագրեր ունի



Խորհրդարանական ընտրությունների մոտենալուն զուգահեռ՝ Արմավիրի մարզում կրկին թեժանում են խոսակցությունները, որ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը՝ գեներալ Մանվել Գրիգորյանի որդին, պատրաստվում է առաջիկա խորհրդարանական ընտրություններում ձեռք բերել պատգամավորի մանդատ: Ասում են, որ Կարեն Գրիգորյանի հավակնությունների շրջանակն այսքանով չի սահմանափակվում, նա այլընտրանք էլ ունի, արդեն գործադիրում՝ Արմավիրի մարզպետի պաշտոնը:

«Կարեն Գրիգորյանը շատ հրաշալի քաղաքապետ է, ժողովուրդը շատ բարձր է գնահատում նրա արածները, շատ սերտ կապի մեջ է ժողովրդի հետ ու անավարտ ծրագրեր ունի, դրա համար էլ առաջադրվելու է քաղաքապետի համար, ուրիշ որեւէ պաշտոնի չի հավակնում, չի ուզում: Ինքը շատ է սիրում Էջմիածինը, ուզում է անընդհատ Էջմիածնի քաղաքապետ մնալ: Մի 30-40 տարվա ծրագրեր ունի քաղաքի հետ կապված, եւ եթե քվե ստանա, ինքն այդքան ժամանակ կցանկանա մնալ քաղաքապետ»,- aravot.am-ին իր պարզաբանումները ներկայացրեց Կարեն Գրիգորյանի մամուլի քարտուղար Վարդան Վարդանյանը: Վերջինիս հավաստմամբ՝ Կարեն Գրիգորյանի 30-40 տարով քվե ստանալն էլ գրեթե կասկածներ չի հարուցում, քանի որ «ժողովրդի հետ շատ լավ է աշխատում»:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Մենք գրկաբաց ենք, սա բաց կուսակցություն է»

Aravot.am-ը շարունակում է տարբեր կուսակցություններից ճշտել, թե, այնուամենայնիվ, որտե՞ղ են գործարար Սիլվա Համբարձումյանին գրկաբաց սպասում, եւ ո՞ր կուսակցությունն իսկապես ունի վերջերս մեծ աղմուկ հանած կնոջ պահանջարկը:

Երեկ այդ մասին մեր հարցից «Ազատ դեմոկրատներ» կուսակցության անդամ Ալեքսանդր Արզումանյանն անկեղծորեն զարմացել էր. «Սիլվա Համբարձումյա՞նն ով է»: Մենք սկսեցինք պատմել, թե այն կինը, որին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն ապտակել էր, որ ինքը դատի էր տվել մարզպետին:

Դեպքերի մանրամասները լսելուց հետո պարոն Արզումանյանը «տեղը բերեց». «Հա, իմացա, բայց չեմ ճանաչում այդ տիկնոջը, չգիտեմ, առաջին անգամ եմ լսում: Մենք գրկաբաց ենք բոլոր ազատ դեմոկրատների համար, սա բաց կուսակցություն է»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# ՀՀԿ-ի ու ԲՀԿ-ի բանավեճը իշխանության քվոտաների շուրջ է

## Ասում է «Ազատ դեմոկրատներ» կուսակցության վարչության անդամ Գառնիկ Գեւորգյանը

- Այս օրերին, ուզենք թե չուզենք, ներքաղաքական համատեքստում քննարկման թիվ մեկ թեման շարունակում են մնալ ԲՀԿ-ՀՀԿ փոխհարաբերությունները: Ինչպե՞ս է դրան վերաբերվում «Ազատ դեմոկրատները»:

- Իշխանական դաշտում տեղի ունեցող գործընթացները, մասնավորապես՝ ԲՀԿ-ՀՀԿ փոխհարաբերությունները, մեծ հաշվով հասարակության, ընտրողի հետ որեւէ կապ չունեն, որովհետեւ խոսքը մի իշխանության մասին է, որը հինգ տարի առաջ խորհրդարանական եւ 2008թ. նախագահական կեղծված ընտրություններով դարձել է իշխանություն եւ այսօր իրար մեջ ընդամենը փորձում է բաշխել կամ վերաբաշխել, քիչ ու շատ անել իշխանության իր մասնաբաժինը՝ քվոտաները, ինչը, ըստ էության, կապ չունի ո՛չ երկրի վիճակի, ո՛չ էլ քաղաքացու խնդիրների հետ: Ընտրություններին մնացել է ընդամենը 3 ամիս, բայց քաղաքական օրակարգ, որպես այդպիսին, ձեւավորված չէ: Ոչ մեկը չի խոսում պետության առջեւ ծառացած մարտահրավերների մասին, այն մասին, թե ուր է գնալու Հայաստանը: Ի վերջո՝ խորհրդարան է ձեւավորվում, որը պետք է լինի այն մարմինը, որը բոլոր այդ հարցերին պիտի պատասխանի: Այդ իմաստով մեզ՝ որպես քաղաքական ուժի, այդ հարցը շատ քիչ է հետաքրքրում: Գուցե նաեւ ինչ-որ չափով ՀՀԿ-ԲՀԿ հակասությունները, որի մասին այսքան խոսվում է, ուռճացված են: Դա իշխանությանը հիմա պետք է այն իմաստով, որ նա ասելիք չունի իր ընտրողին, հասարակությանը, ու որքան երկար տեւեն այս «հակասությունները» ու դրա մասին քննարկումները՝ այնքան իշխանության համար լավ, որովհետեւ այդ դեպքում ինքը ավելի քիչ ժամանակ կունենա խոստումներ տալու եւ ավելի լուրջ բաների մասին խոսելու, որին նա ի վիճակի չի լինելու:

- Բայց այսօր դեռեւս նախընտրական քարոզարշավը չի մեկնարկել, եւ Ձեր մատնանշած թեմաներով հանդես գալու համար դեռ վաղ է:

- Իմ ասածն այնքան ֆորմալ ժամկետներին չի վերաբերում, որքան քաղաքական օրակարգի բովանդակությանը, որը պարտադիր չէ, որ ձեւակերպվի հե՛նց որպես նախընտրական ծրագիր, մեսիջ կամ խոստում: Այսօր տպավորությունն այն է, որ ԲՀԿ-ն ու ՀՀԿ-ն իրենց ամբողջ ռեսուրսը ուղղում են միայն փոխադարձ հարաբերություններ պարզելուն:

Ինչ վերաբերում է ընդհանուր քաղաքական դաշտին, նաեւ՝ ընդդիմությանը, ապա անկախ այն բանից, որ այսօր ընդդիմության ներսում էլ չկա այն համախմբումը, որի մասին այդքան ասվում է, եւ անկախ այն բանից, որ ընդդիմության մեջ էլ կան տարակարծություններ՝ այնուամենայնիվ, կարծում եմ, որ իշխանությունների համեմատ ընդդիմադիր դաշտը մի սանդղակ ավելի բարձր մակարդակի վրա է, քան անցած նախորդ ընտրությունների ժամանակ էր:



- Ի՞նչ իմաստով:

- Այն իմաստով, որ ընդդիմադիր ուժերին հաջողվել է համախմբվել որոշակի խնդրի շուրջ: Նա առաջադրում է թիրախային խնդիրներ եւ ընդհանուր շահ է ձեւակերպել, ու ֆորմալ առումով բոլորը միասնական դիրքորոշում են արտահայտում առնվազն մեկ-երկու խնդիրների շուրջ, եւ արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ ընդդիմադիր ուժերը այդ կարեւորագույն հարցերում դուրս են գալիս իշխանության դեմ: Խոսքը միայն ԱԺ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի անցնելու հարցի շուրջ համերաշխության մասին չէ, որն, ըստ իս, ավելի շատ կոնցեպտի հարց է: Քիչ հավանական է, որ այդ հարցում իշխանությունը կգնա ինքնավնասման ճանապարհով եւ համամասնականի առաջարկը կընդունի, բայց դա բոլոր դեպքերում ընդդիմադիր ուժերին միավորող գործոն է:

Ես նկատի ունեմ նաեւ ընտրությունների օրինականության հետ կապված հարցի շուրջ համաձայնությունը, որն առկա է ընդդիմադիր դաշտում: Շատ լավ է, որ կա այդպիսի համախմբում խաղի կանոններ սահմանելու շուրջ, որի պարագայում ենթադրվում է նաեւ քաղաքական առողջ մրցակցություն:

- Իսկ չե՞ք կարծում, որ այդպիսի քաղաքական մրցակցություն կա նաեւ իշխանական դաշտում, եւ ԲՀԿ-ՀՀԿ ոչ հարթ հարաբերությունները հենց այդ ռեալ մրցակցության արդյունքն են:

- Ռեալ մրցակցություն կա, բայց այդ մրցակցությունը չի ընթանում հասարակությանը, ընտրողին սպասարկելու, նրա շահերի շուրջ: Սա ինքնատիպ մրցակցություն է, որը երբեմն նույնիսկ մրցակցային կանոնների տրամաբանությունից դուրս է՝ իր բացասական դրսեւորումներով: Այդ մրցակցությունը մեկ նպատակ ունի՝ իշխանության մեջ սեփական մասնաբաժինը ֆիքսել: Այս եւ այն մրցակցությունը, որի մասին ես խոսում էի, արմատապես իրարից տարբեր են:

- Բայց արդյոք ԲՀԿ-ՀՀԿ հակասությունները քաղաքական դաշտում նոր հարաբերակցություն ստեղծելու եւ եղանակ փոխելու առումով կարեւոր կամ ուշագրավ չե՞ն: ՀԱԿ-ում, օրինակ, հույս ունեն, որ ԲՀԿ-ն այս հակասությունների արդյունքում կարող է համալրել ընդդիմադիր դաշտը:

- Դա ինչ-որ եղանակ կարող է փոխել, բայց դրանք կլինեն կոնյունկտուրային փոփոխություններ եւ ոչ թե քաղաքական եւ առավել եւս՝ գաղափարական: Եթե որեւէ ուժ իշխանությանն ընդդիմանում է միայն այն պատճառով, որ չի կարողանում իշխանության ավելի դոմինանտ թեւի հետ համաձայնության գալ իշխանությունը հավասար կիսելու հարցում, չեմ կարծում, թե դա այն ընդդիմությունն է, որի մասին խոսում ենք: Ընտրողի վրա, իհարկե, դա կարող է ազդեցություն գործել: Բայց գուցե դա հենց իշխանությա՞ն հաշվարկների մեջ է մտնում, որովհետեւ չի կարելի բացառել, որ այդ հակասությունը որոշակի նախընտրական տեխնոլոգիայի արդյունք է՝ դժգոհ ընտրազանգվածին տարբեր ճանապարհներով, այդ թվում՝ ԲՀԿ-ի միջոցով, դեպի իշխանությունը հակելը: Գուցե դա սխալ վարկած է, բայց ես նկատի ունեմ այն, որ եթե վաղը ԲՀԿ-ն դառնա ընդդիմություն, դա չի լինի այն ընդդիմությունը, որին ընդունված է ընդդիմություն անվանել: Կրկնում եմ՝ ԲՀԿ-ն արդեն 5 տարի իշխանության կրողն է եւ պատասխանատու է նաեւ այդ իշխանության գործունեության համար:

- Կարծում եք՝ բանը կհասնի՞ ԲՀԿ-ին ընդդիմադիր դաշտում տեսնելուն, կամ ՀՀԿ-ին կհաջողվի՞ այս անգամ էլ «կուլ տալ» ԲՀԿ-ին:

- Իրենք (ՀՀԿ-ն) կարծում են, որ կհաջողվի: Նաեւ որոշակի ինքնավստահություն զգացվում է: Չեմ կարող այս պահին գնահատել դրա հավանականությունը, առավել եւս, որ ԲՀԿ-ում էլ հստակություն չկա. մի կողմից՝ նա իշխանության մեջ է, մյուս կողմից՝ ընդդիմության որոշակի առաջարկների վերաբերյալ դրական դիրքորոշում է արտահայտում, ԲՀԿ անդամներից մեկը մի բան է ասում, մյուսը՝ հակառակը: Այդ փոխհարաբերությունները դեռ իշխանության ներսում էլ, ԲՀԿ-ում էլ, կարծում եմ, հստակեցված չեն: Բայց ես չեմ տեսնում այն նախադրյալը, խոսքը կոնյունկտուրայի մասին չէ, որ ԲՀԿ-ն հայտնվի ընդդիմադիր դաշտում, որովհետեւ իր բովանդակությամբ նա գերթե չի տարբերվում իշխանության մյուս հատվածից:

- Այնուամենայնիվ, ընդդիմությանը ձեռնտո՞ւ է ՀՀԿ-ԲՀԿ առճակատումը կամ դրա պատրանքը: Այս հարցի առնչությամբ ընդդիմադիր դաշտում երկու կարծիք կա. այո՝ ձեռնտու է, որովհետեւ դա ու թեկուզ դրա պատրանքը կազդի այդ կուսակցությունների շարքերի վրա, եւ արդյունքում կթուլանա Սերժ Սարգսյանի իշխանությունը, եւ՝ ոչ, որովհետեւ այդ դեպքում ԲՀԿ-ն հասարակությանը կներկայանա որպես ընդդիմադիր եւ ձայներ կխլի հենց ընդդիմադիր ուժերից: Դուք ի՞նչ եք կարծում:

- Այո, այդպիսի տեսակետներ կան: Կա նաեւ տեսակետ, որն արտահայտել է «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանը՝ ասելով, որ ԲՀԿ-ն ՕԵԿ-ի նման «խաղիկներ է տալիս»: Այս վիճակը ընդդիմությանը կարող է ձեռնտու լինել այնքանով, որ եթե երկու ուժերը ֆորմալ առումով համաձայնության հանգեն, մեծ է հավանականությունը, որ նրանց միջեւ քվոտաները բաշխվելու են պայմանավորվածության արդյունքում: Եթե համաձայնության չհանգեն, ապա մեծ է հավանականությունը, որ ԲՀԿ-ն փորձի հավակնել ընդդիմադիր ընտրազանգվածի քվեին, թեեւ պետք չէ այդ իմաստով գերագնահատել այն ուժի հնարավորությունները, որը տարիներ շարունակ իշխանության մաս է կազմել եւ միայն վերջին երկու ամսվա ընթացքում է, որ ընդդիմադիր է ձեւանում: Այդ իմաստով ընդդիմադիր ընտրազանգվածի ձայները կորզելու ԲՀԿ-ի հավակնությունը կարող է մեծ լինել, բայց, կարծում եմ, նա չի ստանա այն, ինչ ընդդիմադիրի դերում հանդես գալով կարող է ակնկալել:

Հարցազրույցը վարեց

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ

# «Նախկինում իրենց արածները փորձում են ինձ վերագրել»

## Կոտայքի մարզպետը հերքում է մարդկանց վախեցնելու մասին լուրերը

Հրազդանի քաղաքապետի ընտրությունների քարոզարշավի ընթացքում մրցակիցները միմյանց հասցեին տարաբնույթ լուրեր են տարածում, մասնավորապես՝ նշվում է, որ գործող քաղաքապետի օգտին է աշխատում մարզպետ Կովալենկո Շահգալդյանը եւ իբր մարդկանց է վախեցնում, ստիպում, որ ընտրեն ոչ թե Սասուն Միքայելյանին, այլ գործող քաղաքապետ, քաղաքապետի թեկնածու Արամ Դանիելյանին:

Երեկ «Առավոտը» Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանին ուղղակիորեն հարցրեց՝ իրո՞ք ինքը միջամտում է ընտրությունների ընթացքին եւ մարդկանց շրջանում քարոզում հօգուտ Արամ Դանիելյանի: Պարոն Շահգալդյանը ի պատասխան՝ ասաց. «Դրանք վերացական խոսքեր են ընդամենը եւ փրփուրից կառչելու փորձեր են, մենք աշխատում ենք ամբողջովին օրենքի շրջանակում, նշեմ՝ մարզպետարանում կան մարդիկ, որոնք իրոք պետք է աշխատեն այս նախընտրական փուլում, օրինակ՝ Արամ Դանիելյանի շտաբի պետը մարզպետի տեղակալն է եւ մեր կուսակցության քաղաքային խորհրդի նախագահի տեղակալն է, եւ նա այս օրերին արձակուրդ է վերցրել, ինչպես նաեւ մարզպետարանի մի քանի այլ աշխատողներ, որպեսզի զբաղվեն այդ գործով: Միայն այս դեպքում եմ ես նրանց իրավունք տվել մասնակցել ընտրարշավին: Ասում են՝ լծակներ են օգտագործվում, թող ակնհայտ ասեն, թե ո՞ր լծակներն են օգտագործվում»:

Նկատեցինք՝ ասվում է, որ մարդկանց վախեցնում են եւ ստիպում, որ ընտրությունը կատարեն այնպես, ինչպես մարզպետը կասի: Կովալենկո Շահգալդյանը ժխտեց այս լուրերը եւս. «Այդպես խոսողները թող գտնեն թեկուզ մեկ-երկու մարդու, որոնք կասեն, թե իրենց վախեցրել են կամ ինչ-որ բան են ստիպել. բոլորը գիտեն, որ դա իմ ոճը չէ, իսկ թե ում ոճն է՝ մարդիկ շատ լավ են հիշում, ում հիշողությունը կարճ չի, գիտեն, որ նախկինում իրենց արածները փորձում են ինձ վերագրել, բայց չի հաջողվում: Չեմ թաքցնում, ես բացահայտ ասել եմ, որ որպես ՀՀԿ տարածքային խորհրդի նախագահ, որպես Հանրապետական կուսակցության անդամ՝ իմ հնարավորությունները օգտագործելու եմ, աջակցելու եմ քաղաքապետի մեր թեկնածուին: Սա բնական է, ինքս էլ աշխատանքից հետո մասնակցում եմ, մարդիկ եմ ընդունում, խնդրում եմ, բացատրում եմ, հասկացնում եմ, սովորական քաղաքակիրթ եղանակով: Պարզապես զարմանալի կլիներ, եթե ես չաջակցեի մեր թեկնածուին: Մենք ամեն ինչ անելու ենք, որ ընտրվի մեր թեկնածուն, քանի որ մարդիկ հավատում եւ վստահում են մեզ»:

Մ. Ե.

## ԱԺՄ բեկորները մինչ ընտրությունները չեն միավորվի

«ԱԺՄ բեկորների հետ մերձեցումը կթողնենք խորհրդարանական ընտրություններից հետո»,- aravot.am-ի հարցին՝ ինչ-որ հանգուցալուծում ստացա՞վ ԱԺՄ-ից երբեւէ անջատված ուժերի վերամիավորման գործընթացը, պատասխանեց ՀԺԱՄ նախագահ Վահրամ Մկրտչյանը: Հարցին, թե ինչո՞ւ ընտրություններից հետո եւ ոչ՝ մինչ ընտրությունները, մեր զրուցակիցը պատասխանեց, որ ի սկզբանե էլ այդ միավորումը նախընտրական ենթատեքստ չուներ: Իսկ ՀԺԱՄ-ում հիմա «կենտրոնացել են խորհրդարանական ընտրությունների վրա» եւ «քաղաքական պարտնյորների» փնտրտուքի մեջ են: Կուսակցության նախագահը տեղեկացրեց, որ իրենք բանակցում են եւ «մեծերի», եւ «փոքրերի» հետ՝ նկատի ունենալով կուսակցություններին: Այս պահին «քարտերը» բացել չցանկացավ, քանի որ հստակ պայմանավորվածություններ առայժմ չունեն:

Հիշեցնենք, որ այս կուսակցության գոյությունն ու գործունեությունը մշտապես կապվել է հայտնի գործարար Բարսեղ Բեգլարյանի (Ֆլեշի Բարսեղի) անվան հետ, որն, ի դեպ, համարվում է Սերժ Սարգսյանի մտերիմ ընկերներից մեկը:

Ն. Գ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կոլեկտիվը ցավակցում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ խորհրդի նախագահ Բարսեղ Բեգլարյանին եւ հարազատներին, նրա մոր՝ Մանուշակ Բեգլարյանի մահվան կապակցությամբ:

# «ԳԱՊ-բնակշին»-ի տնօրենը «թռած» է

### Իսկ նրա հույսած սարդոստայնի մեջ տասնյակ բնակիչներ են հայտնվել, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում ստանալ իրենց բնակարանները:

Մի խումբ խաբված սեփականատերեր, որոնք մեծ գումարներ են մուծել «ԳԱՊ-բնակշին» ընկերությանը՝ բնակարաններ ունենալու ակնկալիքով, սակայն այդ բնակարանների հետքն անգամ չեն տեսել, նամակով դիմում են ՀՀ նախագահին՝ հույս ունենալով, որ նա ուշադրության կենտրոնում կդնի այս հարցը:

«Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին.

Մեծարգո պարոն նախագահ, Ձեզ են դիմում Մաշտոցի պողոտայի հարեւանությամբ՝ Արամի 72-80 հասցեում կառուցվող շենքի խաբված սեփականատերերը: Եվս մեկ անգամ ստիպված ենք դիմել Ձեզ անարդարության, խաբեության, մարդու իրավունքների ոտնահարման աղաղակող փաստի վերաբերյալ: Այսպես՝ «ԳԱՊ-բնակշին» ընկերությունը, որի տնօրեն Գագիկ Պապոյանը տեւական ժամանակ է, ինչ անհայտ պատճառներով բացակայում է հանրապետությունից, եւ որի նկատմամբ քրեական գործ է հարուցված, Արամի 72-80 հասցեում գտնվող շենքի բնակարանների մեծ մասը վաճառել է 3-4 անգամ, շենքի 172 բնակարանների համար կնքված է շուրջ 500 նախնական առուծախի պայմանագիր: Միաժամանակ




տեղեկացնում ենք Ձեզ, որ դեռեւս շենքի շինարարության սկզբից, կատարելով պայմանագրային պարտավորությունները, ըստ ժամանակացույցի, գումարներ ենք ներդրել շինարարության համար: Երբ շենքը կառուցվեց, բնակարանների տերերը տեսան, որ իրենցից բացի՝ կան նաեւ այլ տերեր: Գործին խառնվեց ՀՀ Ֆինանսների նախարարությունը, քանի որ երրորդ կողմը պետությունն է՝ հանձին Երեւանի քաղաքապետարանի: Ֆինանսների նախարարությունը փորձեց այս հարցին ինչ-որ լուծում տալ: Սակայն մինչ օրս ոչ մի գործնական քայլ չի իրականացվել: Սկսվեց դատական քաշքշուկը, մարդիկ ավելի շատ էին, քան բնակարանները: Այսօրվա դրությամբ առաջին ատյանի դատարանները 100 եւ ավելի գործեր են քննության առել եւ կայացրել են դրական որոշումներ: Սակայն անհասկանալի է, թե դատարանը մեկ բնակարանի համար կնքված երկու եւ ավելի պայմանագրերի առկայության դեպքում ինչ իրավական հիմքերով է որոշում կայացրել այս կամ այն հայցվորի օգտին:

Հարգելի պարոն նախագահ, ելնելով ստեղծված իրավիճակից, խնդրում ենք Ձեր կողմից լիազորված պետական մարմնի ներքո ստեղծել հատուկ խումբ, որը կհավաքագրի «ԳԱՊ-բնակշին» շինարարական ընկերության կողմից կնքված նախնական պայմանագրերը եւ համակարգելով դրանք՝ կպարզի, թե յուրաքանչյուր բնակարանի համար քանի պայմանագիր է կնքվել եւ թե ով երբ եւ որքան ներդրում է իրականացրել, եւ վերջապես՝ ում գումարներով է կառուցվել այդ շենքը: Միմիայն նշված տվյալների առկայության դեպքում կարելի է օբյեկտիվ որոշում կայացնել, թե ով է իրական սեփականատերը եւ ում պետք է վերադարձվի ներդրված գումարը:

Պարոն նախագահ, խնդրում ենք մեր հարցը պահեք Ձեր ուշադրության կենտրոնում, որպեսզի պատկան մարմինները չթերանան, չձգձգեն մեր խնդրի լուծումը: Հասարակության մեջ արդարադատության հանդեպ հավատի վերականգնումն իշխանության վարկանիշի բարձրացումն է: Դրանից հետո կվերականգնվի ժողովրդի վստահությունը երկրի նկատմամբ, որի մաս ենք կազմում նաեւ մենք՝ Արամի 72-80 հասցեում կառուցվող շենքերի խաբված սեփականատերերս»:

Նշենք, որ «Առավոտին» ուղղված նամակում առկա են մի քանի տասնյակ ստորագրություններ:

# Եվրադատարան է դիմել՝ ընդդեմ «Ավո Ֆ.Մ.Հ.»-ի

### Այս կառուցապատողի դեմ դատարաններում տասնյակ գործեր կան

Ի թիվս հանուն պետական շահի իրացված գոտու այլ բնակիչների՝ մոտ երկու ամիս առաջ Եվրադատարան է դիմել նաեւ Աբովյան, Նալբանդյան եւ Արամի փողոցներին հարող տարածքում կառուցապատում իրականացնող «Ավո Ֆ.Մ.Հ.»-ից տուժած քաղաքացի Ալբերտ Բաբաջանյանը: Նա այդ քայլին է գնացել, քանի որ իր բնակարանին առնչվող հարցում Հայաստանի դատական համակարգից ոչ մի արդար լուծում չի ստացել: Պարոն Բաբաջանյանը հույս ունի, որ գոնե այդ ճանապարհով կառուցապատողին կստիպի պայմանագրով ամրագրված պարտավորությունները կատարել եւ նոր բնակարանում առկա թերությունների համար էլ 17 միլիոն դրամի չափով տուգանք վճարել: Նա, ձեռքի տակ ունենալով դրա համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, «Ավո Ֆ.Մ.Հ.»-ից նաեւ պահանջում է իրեն տալ շենքի նախագծով նախատեսված բաց պատշգամբով բնակարանը:

Ինչպես Ա. Բաբաջանյանը պատմեց մեզ հետ զրույցում, մեր երկրի դատական բոլոր ատյաններում նրա հայցը չի բավարարվել: Նա այդպես էլ չի կարողացել ապացուցել, որ նախագծով եւ պայմանագրով իրեն պետք է գոնե բաց պատշգամբով բնակարան հատկացնեին: Նա հիմա իր ձեռքի տակ ունի Երեւանի քաղաքապետարանում «Ավո Ֆ.Մ.Հ.»-ի ներկայացրած բնակելի շենքի նախագիծը, որով հաստատվում է, որ կառուցապատողը Նալբանդյան 7/1 հասցեում «Ա» մասնաշենքի բնակարանները, բացի առաջին հարկից, պետք է բաց պատշգամբներ ունենային:

Բացի այն, որ «Ավո Ֆ.Մ.Հ.»-ն պայմանագրով սահմանված պարտավորությունները պատշաճ կերպով չի կատարել, բոլոր դատական ատյաններով հակընդդեմ հայց է ներկայացրել քաղաքացու դեմ՝ իբրեւ թե մի բան էլ քաղաքացին է մեղավոր, որ այդ բնակարանի սեփականատեր չի դառնում:

Նշենք, սակայն, որ Ա. Բաբաջանյանն իր նորակառույց բնակարանը պետք է ստանար դեռեւս 2010 թվականին, մինչ-



դեռ շենքը նախատեսվածից բավականին ուշ է շահագործման հանձնվել, իսկ քաղաքացու բնակարանն էլ նախագծային շեղումներով է եղել եւ բոլորովին այլ տեսք է ունեցել: Նրան բնակարանը մատուցել են առանց բաց պատշգամբի, ծխատարների եւ օդափոխման խողովակների, բացի այդ՝ չի պահպանվել պայմանագրով սահմանված 50քմ ընդհանուր տարածքը: Հենց այդ թերությունները հաշվի առնելով էլ՝ Ա. Բաբաջանյանը հրաժարվել է բնակարանի սեփականատեր դառնալ: Այս եւ «Ավո Ֆ.Մ.Հ.»-ից տուժածների եւ դատական նիստերի թեմային «Առավոտն» արդեն մի քանի անգամ անդրադարձել է (27.04.2010.թ., 09.06.2010թ., 26.06.2010թ., 26.01.2011թ.):

Նշենք, որ Ալբերտ Բաբաջանյանը նախկինում բնակվել է Աբովյան 4/6 հասցեում, որը պետական կարիքների համար իրացվել է եւ տրվել «Ավո Ֆ.Մ.Հ.»-ին, վերջինս էլ պարտավորվել է տարածքի նախկին բնակիչ Ա. Բաբաջանյանին հանձնել իր կողմից կառուցվող բնակելի շենքից բնակարան:

Այսօր դատարաններում ընդդեմ «Ավո Ֆ.Մ.Հ.»-ի մի շարք հայցեր կան, որոնց ելքը, սովորաբար, հօգուտ կառուցապատողի է լինում:

ԱՆՈՒՇ ԽԵՉՈՅԱՆ

# Քանի՞ հեռուստաընկերություն ունի Տավուշի մարզպետը



2011 թվականի հաշվետվության մեջ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանն անդրադարձել է մարզի տարբեր ոլորտներում 2011 թվականին կատարված աշխատանքներին: Մարզպետի տարեկան հաշվետվությունը տեղադրված է մարզպետարանի ինտերնետային կայքում (www.Tavush.gov.am): Հեռահաղորդակցության ոլորտում առկա իրավիճակը, հեռարձակվող հանրապետական հեռուստաալիքները ներկայացնելով՝ մարզպետը նաեւ անդրադարձ է կատարել մարզում գործող տեղական հեռուստաընկերություններին եւ նշել. «Ունենք նաեւ 3 տեղական հեռուստաընկերություն՝ «Տավուշը» եւ «Քամուտը»՝ Նոյեմբերյանում, «Իջեւան ստուդիա»-ն՝ Իջեւանում»:

Նկատենք, որ մարզում գործող տեղական հեռուստաընկերությունները ոչ մարզպետի, ոչ էլ մարզպետարանի սեփականությունը չեն: Նա միայն 40 տոկոս բաժնեմաս ունի մարզային «Տավուշ» հեռուստաընկերությունում, այն էլ իրավաբանորեն ձեւակերպված է իր բարեկամի անունով: 12 տարի պաշտոնավարող մարզպետը երեւի չգիտի, որ 2011 թվականի սեպտեմբերի 1-ից, ավելի քան 5 ամիս, Նոյեմբերյանի «Քամուտ» հեռուստաընկերությունը եթեր դուրս չի գալիս:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Անակնկալ՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի Home-Zone Turbo-ի բաժանորդներին

«Հայաստան ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունից հայտնում են, որ փետրվարի 1-ից իրենց ընկերության Home-Zone Turbo փաթեթի բաժանորդները միեւնույն ամսավճարի դիմաց կստանան տասն անգամ ավելի շատ ներառված խոսելաժամանակ, ինչպես նաեւ կրկնակի արագ ինտերնետ: Այսինքն՝ նախկին 100 րոպեի փոխարեն այժմ փաթեթում ներառված ներցանցային խոսելաժամանակը կազմում է 1000 րոպե, իսկ ինտերնետի՝ ներբեռնման համար տրամադրվող արագությունը կազմում է 4 մեգաբիթ վայրկյանում՝ նախկին 2-ի փոխարեն:

## «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ» եւ «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ+» փաթեթների բաժանորդների ինտերնետն արագացել է

Փետրվարից մայիս ամիսներին «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ» փաթեթի բաժանորդները միեւնույն գումարի դիմաց նախկին 5-ի փոխարեն կշարունակեն ներբեռնման համար ստանալ ամսական 10ԳԲ գերարագ ինտերնետ: Այս մասին տեղեկացնում է «Հայաստան ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունը՝ ավելացնելով, որ «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ+» փաթեթի բաժանորդները ներբեռնման համար նախկին 10ԳԲ-ի փոխարեն արդեն կստանան ամսական 20ԳԲ գերարագ ինտերնետ:

Ընկերությունն առաջարկում է այս մասին ավելի մանրամասն տեղեկությունները ստանալ՝ այցելելով www.vivacell.am կայք կամ զանգահարելով 111 անվճար հեռախոսահամարին:

aravot daily
ՈՒՐԲԱԹ 03.02.2012

# Վարիչը մեղադրվում է կաշառք վերցնելու մեջ

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Նարինե Հովակիմյանի նախագահությամբ, ընթանում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ-ի) Վանաձորի մասնաճյուղի հեռակա ուսուցման բաժանմունքի վարիչ Հենրիկ Հակոբյանի դատաքննությունը:

64-ամյա Հենրիկ Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրօրի 311 հոդվածի 1-ին մասով, 311 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, այն է՝ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, որը կատարվել է զգալի չափերով:

Համաձայն մեղադրական եզրակացության՝ Հենրիկ Հակոբյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, 2011 թվականի հունիս ամսին որոշակի գումար կաշառք ստանալու պայմանով խոստացել է, պաշտոնեական դիրքն օգտագործելով, նպաստել Երեւանի բնակիչ Սարգիս Դիլբարյանին Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ ընդունվելուն եւ ուսուցման ընթացքում հովանավորչություն ցուցաբերել: Այնուհետեւ, 2011 թվականի սեպտեմբերի 19-ին Հենրիկ Հակոբյանը հերթական անգամ Վանաձորի Շինարարների 12 հասցեում գտնվող ՀՊՃՀ-ի Վանաձորի մասնաճյուղի իր աշխատասենյակում ընդունել է Սարգիս Դիլբարյանին, որից հետո վերջինիս ուղարկել ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը հանձնաժողովին հանձնելու, ապա ժամը 12:30-ի սահմաններում, նշված աշխատասենյակում Սարգիս Դիլբարյանից պահանջել եւ անձամբ ստացել է խոշոր չափի՝ 562.305 դրամին համարժեք 1.500 ԱՄՆ դոլար:



Հենրիկ Հակոբյանը, սակայն, չի ընդունում իրեն վերագրվող մեղադրանքը՝ բացատրելով, որ ինքը պաշտոնատար անձ չէ, բնականաբար, չէր կարող նպաստել Սարգիս Դիլբարյանի ընդունվելուն, առավել եւս՝ հովանավորչություն ցուցաբերել ուսման ընթացքում:

«Ես ոչ մի առավելություն չունեմ, ավելին՝ ոչ մի լիազորություն չունեմ մասնակցելու ընդունելության քննություններին կամ ինչ-որ մեկին պարտադրել: Իմ ոչ պաշտոնական իրավունքների, ոչ էլ պարտականությունների մեջ չկա մի կետ, որի համաձայն ես իրավունք ունեմ մարդ ընդունելու, առավել եւս՝ ընդունելությանը մասնակցելու: Ես ոչ առարկայական, ոչ ընդունող հանձնաժողովի մեջ չկամ: Այդ ընթացքում հանձնաժողովների անդամները դեռ հայտնի էլ չէին: Ես չէի կարող ազդել հանձնաժողովի մեջ եղող դասախոսների վրա»,- բացատրում է Հենրիկ Հակոբյանը:

Դատարանում Հենրիկ Հակոբյանի ներկայացուցիչ, փաստաբան Ռուբեն Հակոբյանը (լուսանկարում) պարզաբանում է, որ իր պաշտպանյալը պարզապես խաբել է Սարգիս Դիլբարյանին:

«Նա խաբել է Սարգիս Դիլբարյանին, քանի որ վերջինիս հետ պայմանավորվելու ժամանակ ընդունելության քննությունների եւ փաստաթղթերի ընդունման հանձնաժողովները ձեւավորված չեն եղել: Պաշտպանյալս չէր կարող իրական խոստում տալ, թե կօգնի դիմորդին ընդունվելու հարցում, քանի որ ի պաշտոնե չէր կարող օգնել: Բացի այդ, նույնիսկ չի իմացել, թե ովքեր են ընդգրկվելու այդ հանձնաժողովների կազմում, ինքն էլ երբեւէ այդ հանձնաժողովներում ընդգրկված չի եղել»,- ասում է փաստաբան Հակոբյանը:

Ավելին, փաստաբանը բացատրում է, որ Հենրիկ Հակոբյանի արարքն ուղղված չի եղել պետական ծառայության դեմ:

Նա ասում է, որ կաշառք ստանալու այս տեսակն առկա է միմիայն ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար: Իսկ կրթահամալիրում՝ պետական ոչ առեւտրային կազմակերպությունում, ուսանող-դասախոս հարաբերությունները չեն կարող համարվել որպես ծառայական ենթակայություն, ուստի քննարկվող քրեական գործով կաշառք ստանալու այս եղանակն ուղղակի չի կարող գոյություն ունենալ:

«Այստեղ առկա է կաշառքի պատրվակով ուրիշի խոշոր չափերով գումարի հափշտակություն՝ խարդախության եղանակով»,- ասում է փաստաբան Հակոբյանը:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

# Արշակյանը Օհանյանից ժամանակին չի բողոքել





Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանում շարունակվեց ՃՈ նախկին պետ Մարգար Օհանյանի, գումարտակի հրամանատար Ստեփան Կարախանյանի, ՃՈ աշխատակիցներ Արա Լեւոնյանի եւ Սամվել Մախուրյանի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը՝ դատավոր Մխիթար Պապոյանի նախագահությամբ: Հիշեցնենք, որ ոստիկանության նշված աշխատակիցները մեղադրվում են մեծ քանակությամբ բենզին յուրացնելով՝ պետությանը խոշոր չափերի վնաս հասցնելու մեջ: Նախատեսված էր լսել գործով վկաներին, բայց, փաստորեն, երեկ ներկա էր եւ վկայություն տվեց միայն ոստիկանության մայոր, ՃՈ նախկինում առաջին, ներկայումս երկրորդ գումարտակի հրամանատար Արսեն Արշակյանը:





Վկաներից Արմեն Կարապետյանը քրոջ առողջության պատճառով մեկնել է Մոսկվա, մյուսը՝ Եղիշե Ենգիբարյանը, դատարանին դիմում էր ներկայացրել, որով ասում էր, թե նախորդ դատաքննության ժամանակ ցուցմունքը տալիս ինքը եղել է կաշկանդված եւ խնդրել է հիմք ընդունել նախաքննության ընթացքում տված իր ցուցմունքը:

Օհանյանը հայտարարեց, որ վկան այդ գրությունը ուղարկել է ճնշման տակ՝ հարկադրված: Վկա Մերուժա Կարապետյանը չէր ներկայացել վատառողջության պատճառով, իսկ Նիկոլայ Եղիազարյանի ներկայությունն ապահովված չի եղել:

Վկա Արսեն Արշակյանը իր ցուցմունքում ասաց, որ իրենք ամսական ստացել են 27, երբեմն անգամ 23 հազար լիտր բենզին, սակայն ստորագրել են 33 հազար լիտրի ստացականի տակ: Իսկ Արշակյանի հարցին, թե ինչո՞ւ է այդպես, տնտեսական բաժնի պետ Արա Լեւոնյանը ասել է, որ Օհանյանը տեղյակ է: Ըստ Արսեն Արշակյանի, ինքը անձամբ դա ճշտել է նաեւ Մարգար Օհանյանից, եւ վերջինս հաստատել է, որ ինքը տեղյակ է: Այլ պարզաբանումներ Արշակյանը չի պահանջել եւ չի ստացել: Մարգար Օհանյանին եւ նրա պաշտպանին խիստ մտահոգեց. «Դուք՝ որպես ոստիկանության աշխատող, ոստիկանության մասին օրենքի համաձայն պարտավոր էիք, եթե ձեր ղեկավարի կողմից որեւէ անօրինական քայլ էր կատարվում՝ տեղյակ պահել ՀՀ համապատասխան մարմիններին, ինչո՞ւ չեք արել»:

Արշակյանը պատասխանեց, թե կարծել է, որ դա այլ ծառայությունների համար է արվում:

Դատական նիստը կշարունակվի փետրվարի 7-ին:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

Լուսանկարները՝ Գ.Շամշյանի

## Միջպետական ճանապարհը 6 ժամ փակ էր



Փետրվարի լույս 2-ի գիշերը Նոյեմբերյան-Իջեւան ճանապարհին, Նոյեմբերյան քաղաքից 10 կմ հեռավորությամբ գտնվող Ջուջեւան գյուղի ծայրամասում վրացական համարանիշներով երկու բեռնատար փակել էին միջպետական ճանապարհը: Իջեւանի կողմից շարժվող բեռնատարի վարորդը տեսնելով, որ ճանապարհը պատված է մերկասառույցով, կանգ էր առել: Նոյեմբերյանի կողմից Երեւան մեկնող «Ֆուռի» վարորդն էլ տեսնելով, որ այդ բեռնատարը կանգնած է, վախից արգելակել էր, եւ մեքենան սահելով՝ ողջ երկայնքով փակել էր ճանապարհը: Ինչպես վկայեց վրացական բեռնատարներից մեկի վարորդը, գիշերվա ժամը 3-ից ճանապարհը փակ էր: Սակայն մեծ անցողունակություն ունեցող մեքենաներն այդ փակված հատվածը շրջանցել են ճանապարհին կից այգու միջով: Գիշերվա 4-ից տարածքում է գտնվել Ջուջեւանի գյուղապետ Ժորա Չիլինգարյանը: Նա նաեւ գիշերային ապաստան է առաջարկել Թուրքիայից ժամանած, ճանապարհին «լռված» «Ֆորդի» մեջ գտնվող երեւանցի 4 կանանց, սակայն վերջիններս հրաժարվել են: Փետրվարի 2-ին, ժամը 9-ի սահմաններում, ճանապարհի սպասարկումն իրականացնող Նոյեմբերյանի «Լեւոն երկրորդ» ընկերության «գրեյդերը» քաշեց 2 բեռնատարներին, ճանապարհը բացվեց: Այդ տարածքում էր գտնվում Նոյեմբերյանի փրկարար ծառայության ղեկավար Էդիկ Խաչիկյանը: «Լեւոն երկրորդ» ՍՊԸ աշխատակիցները փետրվարի 1-ի գիշերվա ժամը 11-ի սահմաններում եւ փետրվարի 2-ի առավոտյան ավազ եւ աղ են սփռել ճանապարհին: Ներկայումս ճանապարհը երթեւեկության համար բաց է: Զարմանալի է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ինտերնետային կայքը միջպետական ճանապարհի այդ հատվածի առժամանակ փակ լինելու մասին տեղեկատվություն չի զետեղել:

ՌՈՒԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Ինչ զիբիլ ասես՝ սպունգի պես քաշել ենք»

## Ըստ երգահան Ռուբեն Հախվերդյանի, մենք կորցրել ենք մեր ազգային խոհանոցը, շոու-բիզնեսն էլ «հեծնել» է արվեստը

«Վերջին 20 տարիների ընթացքում տղամարդիկ սկսել են իրար հետ պաչելով խոսել, որը եկել է վրացիներից: Եվրոպայից էլ վերցրեցինք այն, որ կանացի կիսաշրջազգեստներով ու շրջազգեստներով տղաներ հայտնվեցին Երեւանի քաղաքապետարանի հարեւանությամբ: 180 աստիճանով շուռ եկան չափանիշները, եւ բոլորից ինչ զիբիլ ասես՝ սպունգի պես քաշեցինք: Դրա փոխարեն, շատ կուզեի, որ մեր դպրոցներում մի փոքր յոգա անցնեին, որպեսզի ճիշտ շնչեին, ճիշտ սնվեին ու ճիշտ երգեր լսեին»,- երգահան Ռուբեն Հախվերդյանն «Առավոտի» հետ այսպես սկսեց իր զրույցը: Նրա խոսքերով, վերջերս հեռուստա եւ ռադիոեթերներով հնչում է ինչ-որ անհասկանալի ոճի երաժշտություն, որը այն բանի հետեւանք է, որ Բաքվից եկած շատ երաժիշտներ կան մեզ մոտ. «Իրենք այդ Բաքուն մտցրեցին երաժշտության մեջ: Բայց կա էդ երաժշտության ճաշակով եւ անճաշակ տեսակները: Երբ շատ են կլկլացնում ու զզվացնում, լրիվ է դառնում ադրբեջանական, իսկ նախկինում գոնե քաղաքային ինչ-որ բան կար մեջը... Ցավոք, տաշի-տուշի երաժշտությունն այսօր տիրում է երեւի թե ամբողջ աշխարհում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում: Եվրոպայում դեռ կան էլիտար եւ լուրջ երգիչներ, մինչդեռ Ռուսաստանը մեծ աղբանոց է ներկայացնում իրենից՝ Ա-ից մինչեւ այբուբենի վերջին տառը: Վերջին աբսուրդն ինձ համար այն էր, որ Մեսրոպ Մաշտոցի կոչում տվեցին ինձ համար անհանդուրժելի երգչուհի Ալլա Պուգաչովային՝ պոպսայի հիմնադրին: Նա անգամ իր մասին ասում է՝ ИПВКОВО, ЅТЗЅГО тЅопЗ: Իրականում այդպիսի կին եղել է Էդիթ Պիաֆը, ուղղակի Պուգաչովան իրեն իր երազած կնոջ տեղն է դնում: Արետա Ֆրանկլինը, Ջանեթ Ջոփլինը, Թինա Թըրները, նրանք կանայք են, որոնք երգում են, իսկ Ալլան չի երգում, նա էժանագին բառերով, էժանագին մեղեդիներ է ներկայացնում մարդկանց»: Մեր այն դիտարկմանը, որ հայկական երգարվեստում շատերի կողմից Ա. Պուգաչովային համարժեք մեծարվում են Շուշան Պետրոսյանն ու Նունե Եսայանը, Հախվերդյանը պատասխանեց. «Ես կգերադասեի այդ «մասով» լռել: Մի քանի լավ երգ կա Շուշանի մոտ, օրինակ՝ «Իմ անուշ հայրենիքը»: Շուշանն իր երգացանկում լավ երգեր մի քանի հատ ունի, բայց այդ «ուռա» հայրենասիրական երգերը... Ես բոլորովին ուրիշ ձեւ եմ նայում հայրենասիրություն ասվածին: Այդպիսի բառ գոյություն չունի աշխարհում, դա սովետի ժամանակ հնարած բառ է: Իմ կարծիքով, հայրենասիրական երգը լավ երգն է, իսկ հակահայրենասիրական երգը՝ վատը, որովհետեւ հայրենիքը նաեւ մեր լեզուն է, ու եթե դու փչացնում ես այդ լեզուն, ուրեմն դա հակահայրենասիրական է, ինչքան էլ Աղբյուր Սերոբի մասին կամ «Անդրանիկ, ելիր գերեզմանից» երգես»:

«Առավոտի» դիտարկմանը, որ փոփ-արվեստին դեմ լինելով հանդերձ՝ ինքը զուգերգեր ունի փոփ-երգչուհի Սիրուշոյի հետ, երգահանը պատասխանեց. «Հա, ես շատ սիրում եմ իրեն բեմում, շատ եմ սիրում իր արտաքինը, իր աղջկականությունը: Բարկանում եմ, երբ շատ են շպարում իրենց, դարձնում տյոտյա: Սիրուշոն իր աղջկական հմայքը չի կորցնի անգամ 90 տարեկանում: Արտիստիկ երեւույթ է: Ճիշտ է, ձայնի մեծ դիապազոն չունի, բայց փաստը մնում է փաստ, որ անգամ «Եվրատեսիլը», որը փող լվալու տեղ է ուղղակի, գնահատեց նրան ըստ արժանվույն»:

Համամի՞տ է այն մարդկանց հետ, որոնք իր եւ Արթուր Մեսչյանի միջեւ ընդհանրություններ են տեսնում, Ռ. Հախվերդյանը պատասխանեց. «Մի քանի անգամ ասել եմ, որ ես գրում եմ իմ կենսագրությունն իմ խոսքերով, ինքը գրում է ուրիշի կենսագրությունը՝ ուրիշի խոսքերով: Կարող է մի 2 երգ ունի, որ ինքն է գրել, շատ չեմ խորացել իր արվեստի մեջ, որովհետեւ ոչ ինքն է հետաքրքրում, ոչ էլ իր արվեստը: Ինձ բացարձակ չեն հետաքրքրում կարծիքները, թե իմ երգը ինչ տպավորություն թողեց: Ես ուղղակի փաստատար եմ, առհասարակ արվեստագետը փոխանցող է, հնարող չէ: Արարելու մենաշնորհը միայն արարչին է վերապահված»:

Հարցին, թե երգահանն ի՞նչ երաժշտություն է նախընտրում լսել, նա պատասխանեց. «Ես առհասարակ վերջերս համարյա ոչինչ չեմ լսում, որովհետեւ ինձ ինչ որ պետք է եղել լսեմ, լսել եմ մի տասը տարի առաջ: Մենք մեծացել ենք «Բիթլզի» երգերով: Մեր բախտը բերել է, որ արվեստը դեռ շոու-բիզնեսի տակ չէր մտել, ինքը շոու-բիզնեսին հեծած էր, ձին էլ շոու-բիզնեսն էր, իսկ հետո ձին նստեց արվեստի վրա, ինչին դեմ էր Ջոն Լեննոնը, եւ շատ էր խոսում այն մասին, որ շոու-բիզնեսն այլանդակում է արվեստը ...Շոու-բիզնեսին շան տեղ չէին դնում ոչ Վլադիմիր Վիսոցկին, ոչ Վիկտոր Ցոյը: Իսկական արվեստագետի համար արվեստ ստեղծելու պրոցեսն է հետաքրքիր, այլ ոչ թե՝ ավարտը: Երգը լեզվամտածողություն է, եթե դու հայերեն ես երգում, ուրեմն հայերեն ես մտածում: Մեզ մոտ ռուսական կրթությամբ մարդիկ կան, որոնք չեն կարող ուղղակի հայերեն երգել, նրանց մոտ ռուսերեն է մտածած, հայերեն՝ գրած»:

Ի թիվս երգարվեստում եղած այլ խնդիրների, Ռուբեն Հախվերդյանին մտահոգում է նաեւ այն, որ մենք կորցրել ենք մեր ազգային խոհանոցը. «Սա նաեւ կապ ունի ուտել-խմելու հետ, լավ իմաստով՝ նորմալ հաց ուտես, գինի խմես...Ցավոք, գինին ռուսների շնորհիվ 19-րդ դարի վերջում փոխարինվեց օղիով: Չես էլ ուզում գնալ ռեստորան, քանի որ ռեստորանը ուտելու տեղ էր, իսկ հիմա՝ ոռնալու: Արտասահմանում երաժշտություն չի լսվում ռեստորաններում, այն լսվում է պարահրապարակներում կամ այնպիսի տեղերում, որտեղ մարդիկ պետք է գնան պարելու: Այստեղ մարդիկ ուտում են վառած միս՝ խորոված ու լսում ռռնոց: Չկա մի տեղ, որ գնաս ասես՝ ավելուկով սուպ եմ ուզում, սուպ տվեք, մեկ էլ այնպես արեք, որ չնվագեն ու չերգեն»:

ԱՆՈՒՇ ԽԵՉՈՅԱՆ




# Պիեսներ գրողին գոնե «դրամատուրգուհի» չեն ասում

Արձակագիր, դրամատուրգ Կարինե Խոդիկյանի «Իմ դասականները» պիեսների ժողովածուն վերջերս արժանացել է ՀԳՄ նախագահության «Տարվա լավագույն գիրք»՝ Լեւոն Շանթի անվան մրցանակին: «Ինչ էլ լինի, ինչ հարված էլ գա՝ ես կենսասեր եմ: Այդ կենսասիրությունն ու կյանքը հաստատող համառությունն ինձ օգնում են, որպեսզի իմ՝ գրականությամբ սիրելու, ատրելու, դիմադրելու, ների լու, ինչու չէ՝ նաեւ վրեժխնդիր լինելու ուժ տամ ընթերցողին ու հատկապես կանանց»,- մեզ հետ հարցազրույցում անկեղծացավ տիկին Խոդիկյանը:

Իմ զրուցակցի համոզմամբ՝ հասարակական կյանքում կնոջը շատ նպատակասլաց քաղաքականությամբ փորձում են չեզոքացնել. «Այսօր պետականաշինության մեջ կնոջ դերը քիչ է: Երեւի մեր ազգային նկարագիրն է այդպես՝ մի տեղը փոխհատուցվում է մյուսով, այսինքն՝ կինը ինչքան ինքնիշխան է ընտանիքում, այնքան նրա իշխանության սահմանները նվազում են ընտանիքից դուրս»: Որպեսզի կինն ավելի ազատ լինի, դրամատուրգի դիտարկմամբ, հարկավոր է այն քաղաքացիական հասարակությունը, որի նույնիսկ մատույցներում մենք չկանք: Իր դեպքում չի կարող ասել, որ գրող լինելը դժվար է հայ կնոջ համար, ինքն այդ դժվարությունը երբեւէ չի զգացել: Բայց կատակով հավելում է, որ նախընտրում է պիեսներ գրել, քանի որ «դրամատուրգուհի» չեն ասի:

Նա չի ընդունում, երբ ասում են, որ իր պիեսներում կանայք գերադիր են տղամարդու նկատմամբ: Չէ՞ որ այդ ուժեղ, երբեմն շատ ինքնավստահ կանայք սիրում են անձնուրաց, ամեն ինչ տալու պատրաստ մեծ սրտով, ուրեմն՝ իրենց արժանի տղամարդու: «Առաջինը ես չէ, որ պիտի ասեմ՝ Հայաստանը տղամարդկանց երկիր է,- կատակով ասում է Խոդիկյանը,- իսկ կինը Աստծո կողմից ստեղծվել է սիրո, ընտանիքի, մայրության եւ տղամարդկանց աշխարհը գոնե մի քիչ բարիացնելու համար»: Ինքը Ռոլան Բիկովի խոսքով է դիմակայում իրականության փորձություններին՝ «Ինձ մեկ անգամ էլ փորձեցին ոչնչացնել: Ես ամեն ինչ սկսում եմ սկզբից», իսկ մյուս կանանց օգնում է իր պիեսներով: Հիշում է, որ «Կինը անձրեւից հետո» պիեսի ներկայացումներից հետո կանայք մոտենում էին իրեն եւ ասում՝ «Դուք օգնեցիք, որ հավատամ ինքս ինձ, որ շարունակեմ ապրել»: Իսկ «Սիրային քառանկյունի» ներկայացումից հետո մի կին մոտեցել է ու մի քիչ էլ կովարար տոնով ասել՝ «Դուք որտեղի՞ց գիտեք իմ կյանքը, Ձեզ ո՞վ է պատմել իմ մասին»:



Դրամատուրգն ինքնավստահ ժպիտով հավելում է. «Ես հասկանում եմ, որ կպնում եմ կանացի ցավոտ կետերին, եւ կարողանում եմ երբեմն նրանց ոչ միայն ցավը, այլեւ այդ ցավից ազատվելու ճանապարհը ցույց տալ»: Իրեն ֆեմինիստ չի համարում, քանի որ, ինչպես «Վերադառնում եմ, մոռացեք...» պիեսի հերոսուհին էր ասում՝ իր ժառանգական կոդի մեջ ֆեմինիզմ չկա. «Բնությունն այնպես է ստեղծել տղամարդուն եւ կնոջը, այնպիսի մի հավասարակշռերքի վրա է դրել, որ կինը պիտի լինի կին, տղամարդը՝ տղամարդ: Երբ նրանց հավասարակշռությունը թեկուզ աննշան խախտվում է, խախտվում է եւ կնոջ, եւ տղամարդու նկարագիրը»:

ՆԱՐԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### Խեղճ Տորք Անգեղ



Տորք Անգեղի՝ Նորքի զանգվածում գտնվող արձանը անմխիթար վիճակում է: «Առավոտի» ընթերցողներից Վահագն Գրիգորյանը լուսանկարներ ուղարկեց մեզ, որտեղ պարզորոշ երեւում են քանդակի լուրջ վնասվածքները: Հայ առասպելաբանության մեջ հողմն ու ամպրոպը մարմնավորող աստված ու գերմարդկային ուժով օժտված դյուցազն Տորքի քանդակի հեղինակը Կառլեն Նուրիջանյանն է, արձանը կանգնեցվել է 1982 թվականին: Արձանի մասին բազմաթիվ հրապարակումներ են եղել, բայց այն շարունակում է քայքայվել:

Գ. Հ.

VIVAcell MTS

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Պատգամավորը դիմել է քաղաքապետին

Ազ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանը «Առավոտին» տեղեկացրեց, որ երեկ նամակով դիմել է Երեւանի քաղաքապետին եւ պատասխանը ստանալուն պես պատրաստվում է հրապարակել: «Վերջերս լրատվությամբ լուրեր են տարածվում Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հանրակրթական դպրոցների եւ նախադպրոցական հիմնարկների բուֆետներում բացահայտված ժամկետանց կամ ոչ պիտանի ուտելիքի մասին: Հետաքրքիր է այն մեխանիզը, որով դպրոցների բուֆետները շահագործվում են այս կամ այն լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Տնօրենները պնդում են, որ լինելով ՊՈԱԿ-ներ, իրենք «Գնումների մասին» օրենքով մրցույթ չեն հայտարարում, այլ քաղաքապետարանի կրթության վարչության կողմից է նրանց թելադրվում այն կազմակերպությունը, որի հետ կնքում են պայմանագիր: Նույնը՝ ապահովագրության սոցիալական փաթեթի դեպքում է կատարվում, այն դեպքում, երբ փետրվարի 2-ի ՀՀ կառավարության նիստում հայտարարվեց, թե քաղաքացին ինքն է ընտրելու ապահովագրական կազմակերպությունը»,- Տարոն Մարգարյանին գրել է Ազ պատգամավորը՝ ակնկալելով պատասխան:

Սեփ. լր.

## Մրցանակային տեղ գրավելու հնարավորություն ունեն

Երեկ Ջիբրալթարում պետք է ավարտվեր շախմատի Tradewise Gibraltar Chess Festivale փառատոնի հոբելյանական՝ 10-րդ մրցաշարը, որտեղ ուժեղագույնների 256 (56 գրոսմայստեր) խմբի պայքարի մասնակիցների մեջ են Հայաստանի ազգային հավաքականի անդամներ Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի դրոշի ներքո հանդես եկող Վարուժան Հակոբյանը: Հայ շախմատիստներից համեմատաբար հաջող է հանդես եկել Մովսիսյանը, որը նախավերջին տուրից հետո 6,5 միավորով եզրափակում էր առաջատարների տասնյակը: Հակոբյանն ու Սարգսյանը վաստակել էին 6,0-ական միավոր եւ մրցաշարային աղյուսակում զբաղեցնում էին, համապատասխանաբար, 25-րդ եւ 35-րդ հորիզոնականները: Իսկ միանձնյա առաջատարը աշխարհի կանանց չեմպիոնուհի Հոու Յիֆանն էր՝ 7,5 միավորով: Հաղթող ճանաչվելու համար չինաստանցուց պահանջվում էր ընդամենը չպարտվել:

## Վիկտոր Օրտիսը խուսափում է Վանես Մարտիրոսյանից

Ամերիկաբնակ, հայաստանցի բռնցքամարտիկ, WBC-ի արծաթե գոտու տիրակալ Վանես Մարտիրոսյանը, որը պրոֆեսիոնալ ռինգում միայն հաղթանակներ է տոնել, վաղը Սան Անտոնիոյում պետք է հանդիպի Թրոյ Լաուրիի հետ:



Նրանց մենամարտը, ամենայն հավանականությամբ, կայանալու է: Սակայն իրադարձությունների այնպիսի շրջադարձ է կատարվել, որ Վանեսի առջեւ ավելի կարեւոր ու հետաքրքիր հեռանկարներ կարող են բացվել: Բանն այն է, որ փետրվարի 11-ին նշանակված աշխարհի նախկին չեմպիոններ Անդրե Բերտոյի եւ Վիկտոր Օրտիսի միջեւ մենամարտն անորոշ ժամանակով հետաձգվել է, առաջինի՝ մարզման ժամանակ ձախ ձեռքի վնասվածք ստանալու պատճառով: Լրատվամիջոցներն արդեն տեղեկացրել են, որ կտրվել է Բերտոյի ձախ թեւի երկգլուխ մկանը: Ստացվել է մի վիճակ, որը Վանեսի եւ Օրտիսի միջեւ «հարկադրական» հանդիպում կազմակերպելու առիթ կարող է հանդիսանալ: Այս կապակցությամբ Վանես Մարտիրոսյանն արդեն հասցրել է հայտարարություն անել. «Պատրաստ եմ Բերտոյին փոխարինել ցանկացած պահի ու դրա համար իջնել նաեւ կիսաթեթեւ քաշային կարգ: Վիկտորը գիտի, թե ինչ կլինի հետը, երբ ինձանից հարված ստանա»,- ասել է Հայաստանում ծնված Վանես Մարտիրոսյանը: Սակայն ԶԼՄ-ներն արդեն գրել են, որ աշխարհի նախկին չեմպիոնի թիմը մտածում է Ամիր Խանի հետ հանդիպում կազմակերպելու մասին: Եվ դա հայտարարել է Օրտիսի պրոմոութեր Ռիչարդ Շեֆերը:

## Մեկնում են օլիմպիական ուղեգրերի հետեւից



Փետրվարի 5-ին Մոսկվայում մեկնարկում է աթլետիկայի մրցաշար, որտեղ խաղարկվելու են այս տարվա ամռանը Լոնդոնում կայանալիք ամառային օլիմպիական խաղերի ուղեգրեր: Այդ մրցումներում, ինչպես տեղեկացնում է ՀԱՕԿ-ի լրատվական բաժինը, մեր հանրապետությունը ներկայացնելու են հեռացատկորդներ Վարդան Փահլեւանյանն ու Արսեն Սարգսյանը: Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Նարինե Շահբազյանը Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի լրատվական բաժնի կայքին տեղեկացրել է, թե վարկանիշ նվաճելու համար անհրաժեշտ է լինելու Մոսկվայում հաղթահարել առնվազն 810 սմ-ի սահմանագիծը:

# Անհնար է տգիտությամբ պայքարել բժշկագիտության դեմ

## Համաշխարհային նվաճում՝ նորը բժշկագիտության մեջ

ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնաթերթ N 24 (334)

Հաշվի առնելով բազմաթիվ մարդկանց խնդրանքը՝ ընթերցողին ենք ներկայացնում սկոլիոզ հիվանդության բուժման հայտնագործության եւ բուժման սարքավորումների հեղինակ, բժիշկ սկոլիոզաբույժ, բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Կեվեյանի դասախոսությունը, որը կարդացվել է Պետական բժշկական համալսարանում, այնուհետեւ «Սկոլիոզ» բժշկական համալսարանում (40 տպագրական էջ): Այս նվաճումը պատկանում է ողջ հայ ժողովրդին:

1970թ.-ից գիտական հետազոտություններով ապացուցվեց եւ փաստվեց այն, որ սկոլիոզը ոսկրային հիվանդություն է, այլ ոչ թե «մկանային թուլություն»: Օմբրեդանը դեռեւս 1925թ. իրավացիորեն գրել է. «Երեխաների մարմինը դպրոցում ոչ ճիշտ դիրք է ընդունում այն պատճառով, որ նրանց ողնաշարն արդեն թեքված է»: Մանկան հասակին չհամապատասխանող նստարանները, ծանր պայուսակները, նստելու տարբեր դիրքերը եւ այլն, անշուշտ, նպաստում են արդեն առկա սկոլիոզի զարգացմանը, սակայն առաջացման պատճառ լինել չեն կարող:

Ոսկրածին տեսության փաստը հաստատում է նաեւ այն, որ սկոլիոզային պրոցեսի ավարտը համընկնում է ողնաշարի աճի կանգին (22-24 տարեկան), նորից հաստատելով եւ փաստելով, որ սկոլիոզը մկանային հիվանդություն չէ եւ չի կարող լինել: Մինչեւ բուժման խնդիրներին անցնելը՝ հիվանդության ելքը կանխագուշակելու համար անհրաժեշտ է իմանալ.

1. Սկոլիոզը կլինիկապես աճում ու ձեւավորվում է ողնաշարի աճի ընթացքում:
2. Սկոլիոզային ձեւախախտումը սրանում է սեռական հասունացման ընթացքում:
3. Սկոլիոզը խիստ զարգացող է, երբ երեխայի մոտ այն հայտնաբերվել է մինչեւ երեք տարեկանը:
4. Ողնաշարի աճի կանգի դեպքում հիվանդությունը ենթակա չէ հետագա սրացման՝ երբ պահպանվում են բուժման մեթոդիկայի պարտադրված կանոնները: Սկոլիոզի բուժման ավարտը անպայման պետք է համընկնի կմախքի աճի կանգին (24-25 տարեկան):

Չորրորդ աստիճանի սկոլիոզային հիվանդներ չի ընդունվում:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ -1 ՍԿՈԼԻՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ՝ ԼՈՂ, ՄԱՍԱԺ, ԲՈՒԺԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄԱՆՈՒԱԼ ԹԵՐԱՊԻԱ, ՈՂՆԱՇԱՐԻ ՑԱՆԿԱՑԱԾ ՏԻՊԻ ՁԳՈՒՄՆԵՐ: Դրանք պատճառ են հանդիսանում ողնաշարի եւ ողջ մարմնի ոսկրային համակարգի ավելի ճկուն լինելուն, ինչը եւ նպաստում է ողնաշարի եւ ողջ մարմնի ոսկրային համակարգի ձեւախեղմանը՝ առաջացնելով բազմաթիվ հիվանդություններ: Սկոլիոզ հիվանդության առաջացման պատճառ է հանդիսանում ոսկրային համակարգի չափից ավելի ճկուն լինելը՝ ...ուստի եւ չի կարելի ավելի ճկունացնել՝ ավելացնելով կրծքավանդակի դեֆորմացիան, դա ուղղակի ճակատագրական եւ կործանարար սխալ է:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ- 2 Սկոլիոզը ոսկրային համակարգի հիվանդություն է, ուստի եւ ոսկրային ձեւախեղումների (դեֆորմացիաների) վրա պետք է ազդել ՍԿՈԼԻՈԶԻ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ (արտոնագիր N947) եւ միայն ու միայն սկոլիոզաբույժ բժշկի միջամտությամբ, որը պետք է լինի «Սկոլիոզ» բժշկական համալսարանի շրջանավարտ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ-3 Սկոլիոզ հիվանդությունը ամենածանր եւ ամենաբարդ հիվանդություններից է: Այն չի կարելի դիտել որպես սոսկ տեղային հիվանդություն, նրա III եւ IV աստիճանների ժամանակ ախտաբանական (պաթոլոգիական) պրոցեսի մեջ են ընդգրկվում ներքին օրգանները գրեթե ամբողջությամբ: Ուստի եւ բժիշկ սկոլիոզաբույժը օրգանիզմը բուժման է ենթարկում հաստատապես՝ ամբողջությամբ, աստիճանաբար, դանդաղ, բայց հիմնովին՝ փուլային բուժումների ընթացքում: Ողնաշարի կողմնային թեքումն առանց ողերի տորսիոն պտույտի (ողնաշարի պտույտն իր առանցքի շուրջ) հիվանդություն չի համարվում, այն կեցվածքի շեղում է, որը առկա է ցանկացած անձի մոտ: Եթե առկա է տորսիոն պտույտը, ապա դա կալցիում ֆոսֆորական աղերի նյութափոխանակության խիստ խանգարման հետեւանք է, որի դեպքում կալցիումի ավելցուկը պատճառ է դառնում սկոլիոզ հիվանդության առաջացմանը՝ դեֆորմացիայի ենթարկելով նաեւ կողերը, ներքին վերջավորությունները:

Դ. Հ. ԿԵՎԵՅԱՆ

«Սկոլիոզ» բժշկագիտության
ազգային ակադեմիայի նախագահ

Հ. Գ. Մինչեւ այդ անբուժելի համարվող սկոլիոզ հիվանդությունը, հայ գիտնական, դոկտոր, պրոֆեսոր Կեվեյանի ավելի քան քառասնից տարիներ շարունակվող բժշկական գործունեության շնորհիվ ծնունդ առած համաշխարհային նշանակություն ունեցող հայտնագործության, բուժելի է դարձել, ինչը չափազանց պատվաբեր է հայ բժշկագիտության եւ ընդհանրապես հայ ժողովրդի համար, այդ իրողությունով կարող է հպարտանալ ցանկացած հայ մարդ, քանզի այն համաշխարհային նվաճում է:

ՀԱՍՑԵՆ՝ ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ ՓՈՂ., ՇԵՆՔ 25 («ԷՐԵԲՈՒՆԻ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՓՈՂՈՑ), «ՍԿՈԼԻՈԶ» ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ

## Հայաստանը չունի բալետմայստերներ պատրաստող հաստատություն



Հայաստանում մինչ օրս գոյություն չունի բալետմայստերական կրթություն ապահովող ուսումնական հաստատություն, չնայած Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտում (ԵԹԿՊԻ) 1999-2000 ուստարուց գործում է պարարվեստի ռեժիսուրայի բաժինը, որը պատրաստում է պարուսույց-բեմադրիչներ՝ դրամատիկական ներկայացումներում պարային տեսարաններ «ապահովելու» համար: Ռուսաստանի թատերական արվեստների ակադեմիայում ժամանակին համապատասխան կրթություն են ստացել բալետի անվանի արտիստներ Վիլեն Գալստյանը, Ռուդոլֆ Խառատյանը, Սանկտ Պետերբուրգի Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի համապատասխան բաժնում՝ Աշոտ Ասատրյանը:

Հայաստանում բալետմայստերական կրթության անհրաժեշտության մասին անվանի բալետմայստեր, ՌԴ ժողովրդական արտիստ Մաքսիմ Մարտիրոսյանը «Առավոտի» հետ կիսեց իր մտահոգությունը, ասելով, թե մշակույթի եւ կրթության նախարարությունները պետք է վաղուց զբաղվեին այդ հարցով:

«Առավոտը» զրուցեց նաեւ մասնագիտական շրջանակներում ճանաչված ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի ուսանողներ Ռիմա Պիպոյանի եւ Արա Ասատրյանի հետ: Երիտասարդ պարուսույց-բեմադրիչները, որ ժամանակին մասնակցել են հայաստանյան «ՀայՖեստ» եւ «Գիսանե» միջազգային փառատոներին, ասացին, որ բեմադրություններ են իրականացրել տարբեր թատրոններում, հեռուստանախագծերում: Հարցին՝ երբեւէ փորձե՞լ են անդրադառնալ բալետային արվեստին, մեր զրուցակիցները պատասխանեցին, թե դասական բալետում ամեն ինչ ասված է, եւ դա է պատճառը, որ իրենք հիմնականում փորձում են էքսպերիմենտալ ներկայացումներ բեմադրել: Արան հավելեց, որ իր աշխատանքներում օգտագործում է նաեւ խոսք, դա բացատրելով աշխարհում պարային սինթետիկ արվեստի նոր միտումներով: Ռիման էլ հայտնեց, թե ինքը հետաքրքրված է արեւելյան մարզարվեստով (ուշու եւ այլն) եւ դա է պատճառը, որ «Պարիր, թե կարող ես» հեռուստանախագծում բեմադրել է պար՝ ժամանակակից contemporary ոճում, ինչը տարբերվում է մոդեռնից:

Իսկ հնարավո՞ր է մի օր, այնուամենայնիվ, բալետային համարներ բեմադրեն: Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայում վերապատրաստված Արան տեղեկացրեց. «Երեւանի օպերային թատրոնի բալետային խմբի գեղարվեստական ղեկավար Ռուդոլֆ Խառատյանն ինձ եւ Ռիմային հրավիրել է թատրոն՝ բալետային համարներ բեմադրելու, ինչի առիթով ոգեւորված ենք»: Ռիմայի խոսքերով էլ՝ թեմայի ընտրությունից շատ բան է կախված. «Եթե հայ կոմպոզիտորի երկի հիման վրա ստեղծված պար լինի, կփորձենք մեր ազգայինը համադրել դասականի հետ, եթե ժամանակակից կամ մոդեռն պար՝ նույն ձեւով կաշխատենք, դարձյալ զուգորդելով դասականի հետ»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ